



ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

ԾՆՈՂԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻԳՐԱՏՏԻՈՅԻՆ ԶԵՎԵՐ



Սահմանափակումները պետք է լինեն շատ հստակ, չափելի:

Սահմանափակումներ ղեկելուց առաջ կարևոր է անդրադառնալ երեխայի զգացմունքներին, ցանկություններին: Այնուհետև ասել հստակ

սահմանափակումը և մենակարևորը այլընտրանքը: Զգացմունքներին անդրադարձը հնարավորություն է ընձեռում երեխային զգալ իրեն հասկացված, ընդունված:

Երբ երեխան լսում է և զգում, որ ծնողը հասկացել է իր ցանկությունը, անցանկալի վարք դրսևորելու նրա ցանկությունը կտրուկ նվազում է:

Այլընտրանքների տրամադրում:
Երեխան պետք է հստակ իմանա՝ ինչ կարելի է անել սահմանափակված գործողության փոխարեն:

Այլընտրանքի առաջարկումը թույլ է տալիս երեխային հասկանալ, որ իրեն ոչ թե ուղղակի մերժում են, այլ սահմանափակում են տվյալ անթույլատրելի գործողությունը՝ հնարավորություն ընձեռելով կատարել մեկ այլ նպատակահարմար գործողություն:

Սահմանափակումների դեպքում արդյունավետ են նախազգուշացումները, երբ ծնողները նախապես զգուշացում են երեխային իր գործողությունների վերաբերյալ:

ԸՆԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՋՆԵՐ

ԾՆՈՂԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻԳՐԱՏՏԻՈՅԻՆ ԶԵՎԵՐ

Ծնողավարության մեջ արդյունավետ միջոցներից են բնական և տրամաբանական հետևանքները:

Բնական են այն հետևանքները, որոնք ի հայտ են գալիս միանգամից, պլանավորված չեն: Օրինակ՝

Երեխան մեկնում է ձեռքը տաք բաժակին, վառում ձեռքը և հասկանում, որ դա անել չիկարելի:

Տրամաբանական են այն հետևանքները, որոնք դրվում են որպես պայման ծնողի կողմից:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:





Տրամաբանական հետևանքները երեխային ընտրության հնարավորություն են տալիս: Նա գիտակցում է, որ ընտրությունը, ուստի և պատասխանատվությունը իրենն է: Այս հետևանքները պետք է հստակ կապված լինեն երեխայի արարքի հետ:

Տրամաբանական հետևանքները չեն կիրառվում մինչև երեք տարեկանը, դրանք անհասկանալի են երեխայի համար:

Տրամաբանական հետևանքները պետք է լինեն՝ հարգալից, համապատասխան, իրատեսական:

ԱԿՏԻՎ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ

ԾՆՈՂՎԱՐՎԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐ

Ակտիվ լսողության կիրառման նպատակն է՝ երեխային ցույց տալ, որ նա լսված, հասկացված է, որ եթե նա նույնիսկ խնդիր ունի, ծնողը իր կողքին է, կիսում է իր անհանգստությունը: Երեխային ակտիվ լսել նշանակում է «վերադարձնել» երեխային իր ասածը այլ բառերով՝ նշելով նաև թաքնված զգացմունքը, պահանջմունքը:



քանի որ այդ վարքի հիմնական նպատակը ուշադրության գրավելն է:

Սա ծնողը Սա ասելուց հետո, ծնողը կարող է դնել իր պայմանները՝ կարող ես հանգստանալ կես ժամ, հետո շարունակենք, հիմա կենտրոնացիր, որպեսզի հետո կարողանաս անել քո ուզածը ուզածը և այլն:

Ակտիվ լսելու հմտությունները արտահայտում են ծնողի հարգանքը, հոգատարությունը և վերաբերմունքը երեխայի ներաշխարհի հանդեպ: Դա իր հերթին օգնում է երեխաներին ինքնաճանաչման գործընթացում, ինչպես նաև նպաստում է սեփական ուժերի հանդեպ հավատի ուժեղացմանը:

Օրինակ, երեխան նվաճում է, փնթփնթում, հրաժարվում է դասերն անելուց: Ծնողը կարող է այս իրավիճակում պատասխանել. -Ես հասկանում եմ, որ դու հոգնած ես, այս պահին չես կարողանում կենտրոնանալ դասերիդ վրա, այդ պատճառով փնթփնթում ես, անուշադիր ես:

Սա արդեն իսկ բավարար է երեխայի համար, որպեսզի դադարեցնի անցանկալի վարքը,

Ակտիվ լսողություն կիրառելու համար ծնողը պետք է ունենա մի քանի հիմնային դիրքորոշումներ՝



- պետք է իրականում ցանկանա լսել երեխային, այսինքն՝ ժամանակ ծախսել լսելու համար
- պետք է իրապես ցանկանա օգնել երեխային
- պետք է անկեղծորեն ցանկանա ընդունել երեխայի զգացմունքները, նույնիսկ, եթե դրանք շատ տարբերվեն իր զգացմունքներից
- պետք է ունենա վստահություն երեխայի, նրա ուժերի, կարողությունների հանդեպ
- պետք է կարողանա տեսնել երեխայի մեջ առանձին անձ՝ իր կյանքով, զգացմունքներով և այլ: